

Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյան

Ծնվել է 1951թ. Հուլիսի 4-ին Արաբկիրում: Նախնական կրթությունը ստացել է Ստամբուլի սուրբ Խաչ դպրեվանքում: 1967-70թթ ուսանել է Երուսաղեմում: 1971թ.-ին ձեռնադրվել է աբեղա իսկ երկու տարի անց ստացել վարդապետական աստիճան: Ուսումը շարունակել է Եվրոպայի և Ամերիկայի մի շարք բարձրագույն հաստատություններում: 1984թ.-ին Հռոմի Գրիգորյան համալսարանում ստացել է Պսակավոր տիտղոս Արևմտյան եկեղեցիների քրիստոնեության բնագավառում: Այնուհետև ուսումը շարունակել է Օքսֆորդում, 1988թ.-ին պաշտպանել դոկտորական թեզը: 89-ից սկսած պաշտոնավարել է Երուսաղեմում, Կ.Պոլսում և Ամն-ում: 1990թ.-ին նշանակվել է ԱՄՆ-ի Արևելյան Թեմի Առաջնորդ և նույն թվականին Մայր Աթոռում ձեռամբ Վազգեն Առաջին կաթողիկոսի ստացել եպիսկոպոսական ձեռնադրություն: Մինչ այժմ պաշտոնավարում է ԱՄՆ Արևելյան թեմում: